

5.4. Իրավախախտումներ

5.4.1. Հանցագործություններ: Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության ինֆորմացիոն կենտրոնի ներկայացրած տվյալների, հանրապետությունում 2000թ. հունվար-հունիսին, ըստ առանձին հանցատեսակների խմբերի, զրանցված հանցագործությունների դեպքերի մասին տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Հանցագործություններ	2000թ. հունվար-հունիս, ընդամենը	2000թ.հունվար-հունիսի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար-հունիսի համեմատ (նվազումը «-» նշանով)
Բոլոր ծառայությունների գծով, ընդամենը	6237	26.9
այդ թվում		
քրեական հետախուզության գծով, ընդամենը	3860	14.2
որից՝ ծանր	691	- 4.4
այդ թվում՝		
դիտավորյալ սպանություն	46	- 2.1
սպանության փորձ	15	- 59.5
բռնաբարություն և բռնաբարության փորձ	12	0
նարմնական վնասվածք, ընդամենը	236	4.9
որից՝ ծանր նարմնական վնասվածք	89	17.1
պետական կամ հանրային գույքի հափշտակում, ընդամենը	391	4.3
այդ թվում՝ գողության միջոցով	375	6.2
խարդախության միջոցով	16	- 5.9
անձնական ունեցվածքի հափշտակում, ընդամենը	2140	1.6 անգամ
այդ թվում՝		
գողության միջոցով, ընդամենը	1565	1.7 անգամ
որից՝ բնակարային	403	1.5 անգամ
կողոպուտի միջոցով	73	25.9
ավագակության միջոցով	44	- 12.0
խարդախության միջոցով	458	1.5 անգամ
ճանապարհատրանսպորտային պատահար մահացու ելքով	53	- 27.4
տրանսպորտային միջոցների փախցնել	56	5.7
խուլիգանություն	195	- 15.6
ապօրինաբար թմրամիջոցներ պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, գործածելը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը	234	- 11.4
ապօրինի կերպով զենք, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, պատրաստելը, ձեռք բերելը կամ վաճառելը	147	1.4 անգամ
այլ հանցագործություններ քրեական հետախուզության գծով	335	- 43.4
տնտեսական հանցագործությունների գծով, ընդամենը	339	9.0
որից՝ ծանր	144	30.9
այդ թվում՝		
յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքի չարաչափման միջոցով՝ պետական գույքի հափշտակում, ընդամենը	116	9.4
որից՝ խոշոր չափերի	55	1.4 անգամ
կաշառակերություն	25	2.1 անգամ
իշխանությունը կամ պաշտոնական դիրքն ի չարը գործադրելը	27	- 10.0
կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելը կամ իրացնելը	46	7.0
այլ տնտեսական հանցագործություններ	125	4.2
այլ ծառայությունների գծով	2038	1.7 անգամ

Բոլոր ծառայությունների գծով հանցագործությունների քանակական բաշխվածությունը ըստ մարզերի և տրանսպորտային ՆԳ հանրապետական վարչության

	2000թ. հունվար-հունիս, ընդամենը	2000թ. հունվար-հունիսի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար-հունիսի համեմատ (նվազումը «-» նշանով)
Հանրապետություն	6237	26.9
Երևան	2591	21.0
Արագածոտն	172	- 0.6
Արարատ	337	26.2
Արմավիր	583	2.3 անգամ
Գեղարքունիք	305	1.5 անգամ
Լոռի	569	17.1
Կոտայք	379	15.9
Շիրակ	639	1.5 անգամ
Սյունիք	257	6.6
Վայոց Ձոր	98	14.0
Տավուշ	223	16.8
Տրանսպորտային ՆԳ վարչություն	84	- 20.8

5.4.2. Մաքսային իրավախախտումներ: Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության հետաքննության վարչության տրամադրած վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. 1-ին կիսամյակում համակարգում մուտքագրվել է մաքսային օրենսդրության խախտման վերաբերյալ 7 նյութ (1999թ. 1-ին կիսամյակում՝ 12): Մուտքագրված բոլոր նյութերը ուղարկվել են այլ մարմին նախաքննության: Հետաքննվող գործերով առնչվել են 7 մարդ (1999թ. 1-ին կիսամյակում՝ 13 մարդ), նրանցից 6-ը՝ (85.7%) մեղադրվել են խոշոր չափերի մաքսանենգության (1999թ. 1-ին կիսամյակում՝ 61.5%), 1-ը՝ (14.3%) խիստ ներգործող դեղանյութի մաքսանենգության մեջ:

Մաքսային իրավախախտումների ցուցանիշներն ըստ տարիների և 2000թ. 1-ին կիսամյակում

	1997	1998	1999	2000թ. 1-ին կիսամյակ
Մուտքագրված նյութերի քանակը	62	55	21	7
Գործերով առնչվող անձանց թվաքանակը	66	55	22	7

5.4.3. Հարկային իրավախախտումներ: Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության հետաքննության վարչության կողմից ներկայացված հարկային հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. 1-ին կիսամյակում համակարգում մուտքագրվել է 76 նյութ՝ կապված հարկային օրենսդրության խախտումների հետ և նախորդ հաշվետու ժամանակահատվածի մնացորդի հետ կազմել է 87 դեպք: 2000թ. 1-ին կիսամյակում այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 77-ն (88.5%) ուղարկվել է այլ մարմին նախաքննության (1999թ. 1-ին կիսամյակում՝ 86.3%), 2-ի (2.3%)՝ վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 8 գործ (1999թ. 1-ին կիսամյակում՝ 7): Մուտքագրված գործերով առնչվել է 87 մարդ (1999թ. 1-ին կիսամյակում՝ 76): Հետաքննությունների ընթացքում վերականգնվել է 16.6 մլն դրամ:

Չարկային իրավախախտումների ցուցանիշներն ըստ տարիների և 2000թ. 1-ին կիսամյակում

(հազ. դրամ)

	1997	1998	1999	2000թ. 1-ին կիսամյակ
Մուտքագրված նյութերի քանակը	183	107	161	87
Գործերով առնչվող անձանց թվաքանակը	183	107	157	87
Չետաքննությամբ վերականգնված գումարը	16328.0	39826.6	700365.9	16612.7

Չարկային իրավախախտման գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունն ըստ հանցատեսակների, %-ով ընդհանուրից

	2000թ.1-ին կիսամյակում գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունը, տոկոսով	1999 1-ին կիսամյակում գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունը, տոկոսով
Ընդամենը	100	100
Չարկային վճարումների պարտավորությունները կատարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելը	72.4	65.8
Չարկային դրոշմանիշներով չդրոշմավորված ապրանքներ իրացնելը	10.3	3.9
Ապօրինի ձեռներեցությամբ կամ ապօրինի բանկային գործունեությամբ զբաղվելը	6.9	14.5
Չարկային դրոշմանիշներ օտարելը կամ ապօրինի ձեռք բերված հարկային դրոշմանիշներով ապրանքներ դրոշմավորելը	3.5	-
Չարկային դրոշմանիշներ կեղծելը կամ կեղծված դրոշմանիշներ օգտագործելը կամ իրացնելը	2.3	13.2
Չարկային տեսչության կամ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական գործառնություններին դիմադրելը	1.2	-
Այլ բնույթի հանցագործություններ	3.4	2.6

5.4.4. Բնապահպանության իրավախախտումները: Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. 1-ին կիսամյակում վերոհիշյալ նախարարության տարածքային տեսչությունների կողմից ստուգվել է 674 օբյեկտ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 1162-ի դիմաց: Չայտնաբերվել է բնապահպանության օրենսդրության խախտումների 395 դեպք: 1999թ. 1-ին կիսամյակի համեմատ հայտնաբերված խախտումների քանակը նվազել է 561-ով: Բնապահպանության օրենսդրության հայտնաբերված իրավախախտումներից 80-ը կամ 20.2%-ը (1999թ. 1-ին կիսամյակի 174-ի կամ 18.2%-ի դիմաց) վերացվել են սահմանված ժամկետներում:

Բնապահպանության օրենսդրության խախտումներն ըստ բնական պաշարների

		2000թ. 1-ին կիսամյակ	%-ով 1999թ-ի 1-ին կիսամյակի համեմատ (նվազումը «-» նշանով),
Բնապահպանության օրենսդրության խախտումներն	ջրային պաշարների	հայտնաբերվել են	106
		վերացվել են	24
	օդային ավազանի	հայտնաբերվել են	84
		վերացվել են	25
	հողային պաշարների	հայտնաբերվել են	70
		վերացվել են	4

			2000թ. 1-ին կիսամյակ	%-ով 1999թ-ի 1-ին կիսամյակի համեմատ (նվազումը «-» նշանով),
ըստ բնական պաշարների, միավոր	բուսական աշխարհի	հայտնաբերվել են	94	- 77.0
		վերացվել են	20	10 անգամ
	կենդանական աշխարհի	հայտնաբերվել են	41	2.9 անգամ
		վերացվել են	7	- 30.0

Հաշվետու ժամանակաշրջանում 294 անձ ենթարկվել է վարչական տույժի (1999թ. 1-ին կիսամյակի 191-ի դիմաց): Սահմանվել է 3558.4 հազ. դրամի տուգանք (1999թ. 1-ին կիսամյակի 586.1 հազ. դրամի դիմաց): Վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով սահմանված տուգանքը կազմել է 12.1 հազ. դրամ:

Վարչական տույժերն ըստ բնապահպանության օրենսդրության խախտումների

			2000թ. 1-ին կիսամյակ	%-ով 1999թ-ի 1-ին կիսամյակի համեմատ (նվազումը «-» նշանով),
Վարչական տույժերն ըստ բնապահպանության օրենսդրության խախտումների	ջրային պաշարների	քանակ	71	1.8 անգամ
		գումարը, հազ. դրամ	245.4	2.1 անգամ
	օդային ավազանի	քանակ	102	1.5 անգամ
		գումարը, հազ. դրամ	341.8	2.5 անգամ
	հողային պաշարների	քանակ	27	- 22.9
		գումարը, հազ. դրամ	1090.2	11.1 անգամ
	բուսական աշխարհի	քանակ	65	1.8 անգամ
		գումարը, հազ. դրամ	1733.2	8.6 անգամ
	կենդանական աշխարհի	քանակ	29	2.6 անգամ
		գումարը, հազ. դրամ	147.8	4.9 անգամ

2000թ. 1-ին կիսամյակում կազմվել է բնապահպանական օրենսդրության խախտումների հետևանքով պատճառված վնասի հատուցման 31 արձանագրություն, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19-ի դիմաց: Վնասի հատուցման գումարը կազմել է 66.9 մլն. դրամ (1999թ. 1-ին կիսամյակի 50.4 մլն. դրամի դիմաց):

Հասցրված վնասն ըստ վնասի հատուցման արձանագրությունների

			2000թ. 1-ին կիսամյակ	%-ով 1999թ-ի 1-ին կիսամյակի համեմատ (նվազումը «-» նշանով),
Կազմվել է վնասի հատուցման արձանագրություններ ըստ բնական պաշարների	ջրային պաշարների	մարդ	14	7 անգամ
		գումարը, մլն. դրամ	41196.3	2.7 անգամ
	օդային ավազանի	մարդ	6	120.0
		գումարը, մլն. դրամ	18855.6	- 32.1
	հողային պաշարների	մարդ	2	-
		գումարը, մլն. դրամ	461	-
	բուսական աշխարհի	մարդ	7	- 41.7
		գումարը, մլն. դրամ	6399.6	- 14.5
	կենդանական աշխարհի	մարդ	2	-
		գումարը, մլն. դրամ	4.6	-

Բնապահպանության օրենսդրության խախտումների վերաբերյալ 64 գործ /նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 20-ի դիմաց/ հանձնվել է դատաքննչական մարմիններին:

Բնապահպանության օրենսդրության խախտումների հետևանքով առգրավվել է ձկնագողության 19, որսագողության 4 պարագաներ, 2338.6 հատ ձուկ (1999թ. 1-ին կիսամյակի 15600-ի դիմաց) և 51 խոր.մ փայտանյութ (760 խոր. մ):

Էկոլոգիական եզրակացության է ներկայացվել ՍԹԱ-ի սահմանման 36, գործունեության թուլտվության 32, էկոփորձաքննության 7 նյութեր: Բոլոր հայցերն էլ բավարարվել են:

Արմավիրի մարզում էկոլոգիական ստուգում են անցել 4 ավտոմեքենա, որոնցից 1-ի շահագործումը դադարեցվել է: